Քրիստոնյա Հայաստան

2023, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (625)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ
ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Զարթիք, որդիք լուսոյ,
ի յօրհնութիւն Հօրն լուսոյ»
(Ժամագիրք),

«Աղաղակելով որպէս դէտ ի բարձր դիտանոցէ զպատուիրանս Աստուծոյ ի լսելիս ձեր»
(Թուղթ ընդհանրական):

Երախտիքի նուիրական զգացումով այս տարի ոգեկոչում ենք Հայոց առաքելապատիւ հայրապետ Սուրբ Ներսէս Շնորհալու վախճանման 850-ամեակը:

Սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետը հայոց նշանաւոր ու մեծագործ կաթողիկոսներից է, փայլուն աստուածաբան, հզօր քարոզիչ, բանաստեղծ եւ երգահան, պատմիչ ու մանկավարժ: Ներսէս Դ հայրապետը, որպէս քաջ հովիւ, որ «զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ 11), եղաւ առաքինազարդ առաջնորդ, լուսապայծառ փարոս մեր ժողովրդի համար եւ Տիրոջ անխոնջ մշակ: Նա իր բազմաբեղուն առաքելութիւնը ծաւալեց Հռոմկլայում հաստատուած հայրապետական աթոռից: Երանաշնորհ հովուապետը կաթողիկոսական նստավայրի տարագրութեան պայմաններում, ձգտելով միասնական ու ամբողջ պահել իր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կեանքը, հայեացքը միշտ դէպի հայրենիք, օրհնաբանում էր քրիստոսահիմն հայոց հոգեւոր կենտրոնի՝ Սուրբ Էջմիածնի բացառիկ կարեւորութիւնն ու նշանակութիւնը. «Հայաստանեայցդ եկեղեցի, յորում կաթեաց շողն երկնային.... լոյսն անստուեր ծաւալեցաւ, եւ ճառագայթն անճառելի»:

Սուրբ Ներսէս Շնորհալու ողջ կեանքն ու գործունէութիւնը Աստծոյ փառաբանութիւն էր եւ մարդկանց սրտերը Աստծուն մերձեցնելու տքնաջան առաքելութիւն: Նա անյոգնաբեկ քարոզչութեամբ Տիրոջ պատուիրաններն էր ուսուցանում հաւատացելոց՝ «զարթիք, որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ», «աղաղակելով որպէս դէտ ի բարձր դիտանոցէ զպատուիրանս Աստուծոյ ի լսելիս ձեր»: Մեծանուն հայրապետը հովուեց հայոց հօտը դժուարին ու աղէտալի ժամանակներում՝ մեծ ցաւ ու տրտմութիւն կրելով մեր ժողովրդի տարագրուած ու գաղթական դարձած բազում զաւակների համար: Նա հայրաբար խրատական իր ազդու խօսքն ուղղում էր բոլորին՝ իշխաններից մինչեւ զինուոր ու շինական, եպիսկոպոսներից մինչեւ քահանայ, սարկաւագ ու դպիր՝ հաւատով զօրացնելով եւ գիտելիքներով սնուցելով ամենքին: Սուրբ Ներսէս Շնորհալու հոգեթով խօսքը, նշանակալի աշխատութիւնները, տաղերն ու գանձերը՝ իւրայատուկ մտքի խոյանքով ու վայելուչ ոճով, ուղղուած են հայոց ազգային-քրիստոնէական ինքնութեան պահպանմանը, հոգեւոր եւ մշակութային կեանքի բարձրացմանն ու բիւրեղացմանը: Երանաշնորհ հայրապետի բեղուն գրչի արգասիքները բարեզարդեցին մեր եկեղեցու ծիսակարգերը, արթուն պահեցին մեր ժողովրդի քրիստոնէական հոգին ու միտքը եւ լուսաւորեցին նրա քարքարոտ ուղին դէպի հոգեւոր եւ ազգային զարթօնքի նոր հորիզոններ:

Սուրբ Ներսէս Շնորհալին մեծ համբաւ ու ճանաչում է ունեցել նաեւ միջազգային ու միջեկեղեցական ասպարէզում: Յունաց, ասորաց, լատինաց քրիստոնեայ աշխարհում հոգեւորականներ եւ հաւատացեալներ տպաւորուել ու ոգեշնչուել են նրա առաքինի վարքից եւ գիտական մեծութիւնից: Մշտապէս ապաւինելով Աստծոյ ողորմածութեանը՝ նա յուսառատ ջանքեր գործադրեց՝ ի խնդիր եկեղեցիների սիրով գործակցութեան: Հայոց երանեալ հայրապետը քրիստոնէական եկեղեցիների միջեւ ծառացած դարաւոր բաժանումը ջանաց աւետարանական ոգով փարատել, եղաւ ջատագովը քրիստոնեայ աշխարհի միասնականութեան՝ Հայ եկեղեցու դիրքորոշումը բնորոշելով «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» բանաձեւով:

Սիրելիներ, հայազգի մեծագործ զաւակների կեանքի ու գործոց պայծառ օրինակները լուսաւոր ուղենիշ են սերունդների համար: Հայոց տաղանդաշատ ու հռչակաւոր անձանց յիշատակի նորոգումով, որպիսին է Սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետը, այլեւ նրանց գօտեպնդող յորդորներով, խրատներով ու խրախուսանքով ուժ է առել մեր ժողովուրդը՝ դիմակայելու փորձութիւններին, ապրելու, մաքառելու եւ բարձրացնելու իր կեանքը առաջադիմութեան եւ լուսաւոր գալիքի կերտման ճանապարհին: Շնորհալի հայրապետն իր վառ օրինակով այսօր էլ, «աղաղակելով որպէս դէտ ի բարձր դիտանոցէ զպատուիրանս Աստուծոյ», ոգեշնչում է հաւատացելոց՝ ըստ առաքելական պատուէրի. «Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն, զբանն ողջմտութեան» (Տիտ. Բ 7–8):

Հայրապետական այսու կոնդակով հրաւէր ենք ուղղում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու թեմական եւ ազգային կառոյցներին, գիտական ու կրթական հաստատութիւններին, բարեսիրական, հայրենակցական կազմակերպութիւններին եւ համայն մեր ժողովրդին՝ գիտաժողովներով, հրատարակութիւններով ու հանդիսութիւններով նշանաւորել Սուրբ Ներսէս Շնորհալու անմար յիշատակը, վերարժեւորել ազգային եւ համաեկեղեցական անդաստանում միշտ արդիական նրա աւանդը, մեծարել քրիստոնէական հաւատքի ականաւոր ուսուցչին եւ ազգային-հոգեւոր մեր կեանքը նորոգողին:

Տիրոջ Իջման սուրբ սեղանի առջեւ աղօթում ենք, որ բարերարն Աստուած, Սուրբ Ներսէս Շնորհալի Հայոց հայրապետի բարեխօսութեամբ, Իր ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահպանի եւ հաւատով, յոյսով ու սիրով զօրացնի համայն մեր ժողովրդին՝ դիմագրաւելու մեր կեանքը յուզող դժուարութիւնները եւ իրականացնելու լուսաւոր գալիքի համազգային իղձերը: Թող Տէրը խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի մեր հայրենիքին եւ անսասան ու պայծառ պահի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ եկեղեցին այսօր եւ միշտ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ3-ն մարտի
յամի Տեառն 2023 եւ ի թուին հայոց ՌՆՀԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1211

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Մարտի 8-ի՝ Կանանց տոնի առիթով

Գարնան զարթոնքով լեցուն Մարտի 8-ի այս տոնական օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում մեր մայրերին, քույրերին ու դուստրերին եւ երախտագետ սրտով մեծարում նրանց նվիրյալ ու սիրառատ ջանքերն ընտանեկան կյանքի բարօրության ապահովման գործում, ինչպես նաեւ՝ գովարժան ավանդը պետական ու հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում:

Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, ընտանիքին ու հայրենիքին ձեր նվիրումով են պահպանվում եւ սերնդեսերունդ փոխանցվում մեր ազգային ավանդույթները, ձեր հոգատար դաստիարակությամբ են հասակ առնում ազգի եւ Եկեղեցու արժանավոր զավակները, որոնք մեր պատմության վճռորոշ հանգրվաններում, ինչպես նաեւ արցախյան պատերազմի օրերին եւ ներկայիս իրենց սխրանքներով ու անձնազոհությամբ հերոսանում են հայրենյաց պաշտպանության սրբազան առաքելության մեջ:

Այսօր ամենքիս պարտքն է անխոնջ աշխատանքով ապահովել մեր երկրի անվտանգ ու խաղաղ ապագան, միասնական ոգով աջակից լինել Արցախում շրջափակման մեջ գտնվող մեր ժողովրդին, առանձնակի հոգածություն եւ ուշադրություն ցուցաբերել մեր վիրավորված զավակներին եւ նահատակ քաջորդիների ընտանիքներին:

Հայրապետիս աղոթքն ու մաղթանքն է, որ Տերը հաստատուն պահի տիկնանց եւ օրիորդաց հավատքի, բարի գործերի ու առաքինությունների մեջ եւ շնորհի արեւշատ կյանքի երջանիկ օրեր: Հայցում ենք, որ բարձրյալն Աստված խաղաղ ու բարօր պահպանի մեր հայրենիքը եւ մեր աշխարհասփյուռ ժողովրդին՝ պարգեւելով ուժ եւ կորով՝ կերտելու իր լուսավոր ապագան:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն ձեզ ամենքիդ հետ. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մարտի 8-ին

«Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության գլխավոր գործադիր տնօրենին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն դոկտոր հայր Թոմաս Շվարցին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց հայր Թոմաս Շվարցին՝ Հայաստանում կազմակերպության կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի համար, որոնք ուղղված են հատկապես պատերազմից տուժած ընտանիքներին: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության եւ Մայր Աթոռի միջեւ առկա ջերմ հարաբերություններին ու բազմամյա համագործակցությանը՝ գոհունակություն հայտնելով Հայաստանի համար դժվարին իրավիճակներում քույր Եկեղեցիների ցուցաբերած զորակցության համար:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, Ադրբեջանի՝ Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնազավթմանն ու շարունակվող ագրեսիային, ինչի վկայությունն է Լաչինի միջանցքի արգելափակումը, ինչպես եւ օրերս ադրբեջանական դիվերսիոն խմբի հարձակումն Արցախի ոստիկանության աշխատակիցների վրա: Այս առնչությամբ Նորին Սրբությունը կարեւոր նկատեց միջազգային հանրության ջանքերը՝ ուղղված տարածաշրջանում կայունության հաստատմանն ու մեր ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությանը:

Իր հերթին հայր Թոմաս Շվարցը, խոսելով կազմակերպության մարդասիրական առաքելության մասին, ընդգծեց, որ մշտապես զորակից է կարիքավորներին ու Եկեղեցուն եւ պատրաստակամություն հայտնեց շարունակելու գործակցությունը Հայ Եկեղեցու հետ:



Մարտի 9-ին

ՀՀ-ում Բրազիլիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգային: Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով՝ մաղթելով նրան արդյունավոր առաքելություն Հայաստանում: Վեհափառ Հայրապետը կարեւորեց հայ-բրազիլական կապերի ամրապնդումը եւ գործակցության հետագա խթանումը: Հայոց Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ Բրազիլիայի հայ համայնքն իր կարեւոր ներդրումն է բերում երկրի առաջընթացին՝ արժանանալով Բրազիլիայի իշխանության եւ ժողովրդի բարյացակամ ու հոգատար վերաբերմունքին:

Այնուհետեւ նորանշանակ դեսպանը Նորին Սրբությանը ներկայացրեց առաջիկա իր ծրագրերը՝ հատկապես կարեւորելով հայ-բրազիլական մշակութային ու տնտեսական կապերի զորացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Դեսպանը հավաստիացրեց, որ ջանքեր կներդնի հանուն երկու պետությունների բարեկամական ջերմ հարաբերությունների առավել ամրապնդման:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ տարածաշրջանում առկա մարտահրավերներին, Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ Ադրբեջանի ոտնձգություններին եւ Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին:

Մարտի 14-ին

ՀՀ-ում Վրաստանի Հանրապետության նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեին:

Իր օրհնությունը բերելով նորանշանակ դեսպանին՝ Նորին Սրբությունը մաղթեց վերջինիս արդյունավոր առաքելություն՝ ի նպաստ հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության առավել զորացման:

Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց, որ երկու ժողովուրդների դարավոր բարեկամության հիմքում նաեւ քրիստոնեական արժեքներն են, որոնց շնորհիվ հայ եւ վրաց ժողովուրդները պահպանել են իրենց գոյությունն ու ինքնությունը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ եղբայրական ժողովուրդներն իրենց լավատեսական ոգու եւ զորեղ հավատքի միջոցով կհաղթահարեն առկա մարտահրավերներն ու փորձությունները:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Վրաստանի հայ համայնքի կարեւոր ներդրմանը երկրի զարգացման գործում:

Դեսպան Գիորգի Շարվաշիձեն, Նորին Սրբությանը փոխանցելով Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Երկրորդի ողջույնները, հավաստիացրեց, որ ջանքեր կգործադրի հայ-վրացական կապերի առավել զորացման ուղղությամբ:

Զրույցի ընթացքում դեսպանը կարեւորեց նաեւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատումը:

Ավարտվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Փետրվարի 28-ից մարտի 3-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը: Ժողովի նիստերն ատենապետեց Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Հայաստանում եւ Արցախում 44-օրյա պատերազմի հետեւանքով ստեղծված կացության եւ առկա մարտահրավերների մասին զեկույց ներկայացրեց ԳՀԽ անդամ, իրավաբանական գիտ. դոկտոր Գեւորգ Դանիելյանը: Զեկուցողը, հանգամանորեն ներկայացնելով Հայաստանում եւ Արցախում ստեղծված կացությունը, անդրադարձավ երկրի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներին՝ մասնավորաբար անվտանգային մարտահրավերներին:

Անդրադառնալով Արցախի հիմնախնդրին՝ ԳՀԽ-ն արձանագրեց, որ արցախահայության անվտանգության երաշխիքն Արցախի անկախության ճանաչումն է՝ ելակետ ունենալով ազգերի ինքնորոշման հիմնարար սկզբունքը: Այս առնչությամբ կարեւորվեցին համազգային ընդհանուր ջանքերի միավորումը, միջազգային հանրության ամենալայն շրջանակների աջակցության ապահովվումը եւ մասնավորաբար Եկեղեցու՝ այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների առավել ընդլայնումը:

Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը ժողովականներին տեղեկություններ փոխանցեց Մայր տաճարի հիմնանորոգության եւ ամրակայման աշխատանքների վերաբերյալ: Ծանուցվեց, որ բարեհաջող ընթացքի մեջ են Մայր տաճարի ներքին հարդարման, որմնանկարների վերականգնման, օդափոխության համակարգի տեղադրման եւ արտաքին բարեկարգման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է սույն թվականի սեպտեմբեր ամսին:

Ողջունելով կատարված աշխատանքները՝ ԳՀԽ-ն գոհունակությամբ արձանագրեց, որ տեւական դադարից հետո Մայր տաճարն իր դռները կբացի հուրախություն եւ ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի:

Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության, եպիսկոպոսաց ձեռնադրության եւ հարակից միջոցառումների կազմակերպման վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը: Սրբազան հայրը ժողովականներին տեղեկացրեց, որ արարողություններն ու միջոցառումները հավուր պատշաճի կազմակերպելու համար ձեւավորվել են հանձնախմբեր, որոնք կհամակարգեն ծիսական, արարողակարգային, հրատարակչական, քարոզչական եւ տեղեկատվական ոլորտների աշխատանքները: Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց ներկայացվածը եւ ծրագրեց Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության արարողությունները եւ հարակից միջոցառումները կազմակերպել սույն թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում, իսկ եպիսկոպոսական ձեռնադրությունը՝ հոկտեմբերի 8-ին:

Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը ժողովականներին ներկայացրեց Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցին նվիրված տոնակատարությունների շրջանակում նախատեսված հոգեւոր, կրթական, մշակութային միջոցառումների ծրագիրը: ➥ էջ 3

Ավարտվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

↩ էջ 2

Նշվեց նաեւ, որ առաջիկա կիրակի՝ մարտի 5-ին, Հայոց եկեղեցիներում կընթերցվի Սուրբ Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված հայրապետական կոնդակը:

Նաթան սրբազանը տեղեկացրեց, որ ի նշանավորումն երանաշնորհ հայրապետի մահվան 850-րդ տարելիցի՝ սույն թվականի դեկտեմբերին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին Վատիկանում կկազմակերպեն համատեղ միջոցառումներ: Սրբազան հայրը նշեց նաեւ, որ Սուրբ Ներսես Շնորհալու հիշատակի օրը ՅՈՒՆԵՍԿՕ-ն եւս ներառել է հատուկ նշվող տոների շարքում:

Ժողովականները ծանոթացան նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2022 թվականի գործունեության տեղեկագրին: Արձանագրվեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականների ընդհանուր թիվը 721 է՝ 49 արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 72 կուսակրոն քահանա (ծայրագույն վարդապետ, վարդապետ եւ աբեղա), 504 քահանա, 96 սարկավագ: Անցած տարում իրականացվել են հոգեւոր-քարոզչական, կրթական, մշակութային տարբեր ծրագրեր՝ ՀՀ զինված ուժերում, քրեակատարողական հիմնարկներում, կրթական ու մշակութային հաստատություններում եւ համայնքներում:

Հատուկ անդրադարձ կատարվեց 2022 թվականի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրականացրած սոցիալական աջակցության եւ օժանդակության ծրագրերին: Հիշյալ ծրագրերն ուղղված են եղել ի նպաստ զոհված եւ վիրավոր զինվորների ընտանիքների, պատերազմի հետեւանքով Արցախից եւ սահմանամերձ բնակավայրերից տեղահանված ու սոցիալապես ծանր կացության մեջ հայտնված հայորդիների:

Քառօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ եկեղեցու կանոնական ու հովվական կյանքին, կարգապահական եւ իրավական խնդիրներին, կրթական ծրագրերին եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանը վերաբերող հարցեր:

Ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ գնահատանքի խոսքով:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի



Մեծ պահք

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին սահմանել է պահոց տարաբնույթ օրեր՝ օրապահք, շաբաթապահք եւ հատուկ պահք:

Ամենաերկարատեւը Մեծ պահքն է. այն տեւում է քառասուն օր՝ մինչեւ Ծաղկազարդի կիրակի, որին հաջորդում է Ավագ շաբաթը: Վերջինիս ընթացքում Եկեղեցին նախապատրաստում է հավատացյալ ժողովրդին՝ արժանավորապես եւ մեծագույն երկյուղածությամբ մասնակցելու Սուրբ Հարության տոնին:

Մեծ պահքի քառասնօրյա ժամանակահատվածը խորհրդանշում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ անապատում պահեցողության եւ փորձության շրջանը: Մկրտությունից հետո Հիսուս «Հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ եւ չխմեց այն օրերին....» (Ղուկ. Դ 1–3): Մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր օրինակով ցույց տվեց պահքի եւ ծոմի կարեւորությունը:

Շատերը պահքը համարում են միայն կենդանական ծագում ունեցող սննդից հրաժարվելու շրջան, սակայն իրականում այն ունի առավել խոր ու հոգեւոր իմաստ, ինչի մասին է վկայում Աստվածաշունչը: Քրիստոս պահքի մասին խոսելիս շեշտում է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում.

ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը եւ լվա՛ քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար. եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ. Զ 16–18): Քրիստոս ուղղորդում է մարդկանց, սովորեցնում, թե ճշմարիտ հավատացյալն ինչպես պետք է պահք պահի:

Հիսուսի համբարձումից հետո քրիստոնեական համայնքներում սկսեցին սահմանվել պահոց շրջաններ, եւ պահքը ներմուծվեց քրիստոնեական կենցաղ:

Արդեն իսկ «Գործք առաքելոց»-ը վկայում է, որ երբ Պողոսն ու Բառնաբասը քրիստոնեական առաջին համայնքների համար երեցներ էին ձեռնադրում, այդ անում էին պահքով եւ աղոթքով. «....երեցներ ձեռնադրեցին, պահեցողությամբ հանդերձ աղոթք արեցին եւ նրանց հանձնեցին Տիրոջը, Որին հավատացել էին» (Գործք ԺԴ 22):

Պահեցողությունը վերաբերում է ոչ միայն ճաշակելիքին՝ հեռու մնալու ախորժելի կերակրից, այլ նաեւ բոլոր զգայարաններին: Կերակրից հրաժարվելն անօգուտ է, եթե առաջին հերթին չենք հրաժարվում մեղքից: Այս առնչությամբ Ս. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում եւ չի հոգնում»:

Եկեղեցու նշանավոր հայր Բարսեղ Կեսարացին առավել խիստ խոսքերով է արտահայտում իր տեսակետն այս հարցի վերաբերյալ. «Միս չես ուտում, բայց եղբորդ միսն ես ուտում: Գինի չես խմում, սակայն չես հրաժարվում նրա հանդեպ թշնամական վերաբերմունքից»:

Եկեղեցու մյուս հայրերը եւս պահքի մասին խոսելիս շեշտում են, որ առավել կարեւոր է մեղքից հեռու մնալու, ժուժկալությամբ եւ ողորմածությամբ ապրելու սկզբունքը: Ոմանք պահք են պահում, բայց արդյունքում անվարձք են մնում. ինչպես օրինակ՝ երբ ժլատը պահք է պահում, որ դրամը չծախսվի, կեղծավորը՝ գովեստներ ընդունելու, տկարը՝ մարմինը չվտանգելու համար, աղքատը պահում է, քանզի կերակուր չունի: Այսինքն՝ պահեցողությունն իրենց եւ ոչ թե Աստծու համար է, այնինչ պահքը միայն Աստծու փառքի համար է սահմանված (տես *Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցի,* Խրատի թանգարան (18–19-րդ դդ.), Ս. Էջմիածին, 2015, էջ 410):

Պահեցողությունը ոչ միայն հոգուն է անհրաժեշտ, այլ նաեւ մարմնին է օգտակար, եւ ամենեւին պատահական չէ, որ նաեւ բժիշկներն են մարմնի առողջության համար հանձնարարում պահք պահել: Ուստի ով տրտնջում է Սուրբ Եկեղեցու սահմանած պահքից ու զեխությամբ անձնատուր լինում կերակուր եւ ըմպելիք ըմբոշխնելուն, ոչ միայն հոգուն է վնասում՝ հպատակեցնելով զորավոր կրքերին, այլ նաեւ մարմինն է խեղում՝ ենթարկելով զանազան ախտերի ու հիվանդությունների: Այսինքն՝ եթե առողջ է հոգին, մարմինը եւս առողջ կլինի:

Մեծ պահքի շրջանի յուրաքանչյուր կիրակի ունի սուրբգրային որոշակի խորհուրդ: Առաջին կիրակին կոչվում է Բուն բարեկենդան (բոլոր պահքերին նախորդող կիրակիներն անվանվում են բարեկենդան, միայն Մեծ պահքին նախորդողն է կոչվում Բուն բարեկենդան, քանի որ նրան հաջորդում է ամենաերկար պահքը), Արտաքսման կիրակի, Անառակի կիրակի, Տնտեսի կիրակի, Դատավորի կիրակի, Գալստյան կիրակի, Ծաղկազարդ: Այսպիսով՝ այս ողջ ընթացքը խորհրդանշում է մարդկության անցած ճանապարհը՝ եդեմական պարտեզից մինչեւ Գողգոթա տանող, այսինքն՝ մարդկության փրկագործության ուղին (տես *Շնորհք արք. Գալուստանյան,* Մեծ պահքի կիրակիների ոսկե շղթան, Ս. Էջմիածին, 2001, էջ 4):

Մեծ պահքը կիսվում է միջինքով, որը նշվում է պահքի 24-րդ օրը: Միջինքից սկսած՝ խաղաղական ժամերգության ընթացքում սկսում են երգվել Ստեղիները՝ հավուր պատշաճի: Միջինքը հուշում է, որ պահքի ավարտին մնացել է եւս 24 օր:

Այս օրվա հետ կապված կան ժողովրդական բազմաթիվ ավանդույթներ: Միջինքին է առնչվում ծիսական բաղարջը, որ հայտնի է մի շարք անվանումներով՝ միջունք, մրջնաբաղարջ, կլոճ, կապար եւ այլն: Այն կլորավուն, ուռուցիկ տեսք ուներ, եւ պատրաստում էին ձեթով, մեղրաջրով եւ քիշմիշով: Միջինքի պահոց գաթայի մեջ դնում էին ուլունք կամ մետաղադրամ: Այն կտրում էին ըստ ընտանիքի անդամների թվաքանակի, բաժին էին հանում նաեւ ընտանի կենդանիներին եւ հողին: Ըստ ժողովրդական ընկալման՝ ում բաժին էր ընկնում մետաղադրամը, ուլունքը կամ փայտյա խաչը, նրան հաջողություն էր սպասում ողջ տարվա ընթացքում:

Միջինքով չէր ավարտվում պահեցողությունը. այն նույն ձեւով շարունակվում էր մինչեւ Սուրբ Հարության տոնը:

Բուն բարեկենդանից հետո եկեղեցիների վարագույրները փակվում են մինչեւ Ծաղկազարդ: Առաքելական կանոններում եւս նշվում է, որ Մեծ պահքը պետք է 40 օր տեւի, որից հետո նշվի Սուրբ Հարությունը:

Մեծ պահքը սահմանվել է որպես զղջման, ապաշխարության, ինքնամաքրման ժամանակահատված: Քրիստոնյան ճշմարիտ պահքի միջոցով կարող է հասնել փրկության եւ վերագտնել դրախտը, որը նախածնողները կորցրին պահեցողության պատվիրանը խախտելու հետեւանքով. «Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. Դ 4):

Շարունակելի

Գոհարիկ ՂԱԶԱՐՅԱՆ

Բուն բարեկենդան

Մեծ պահքի կիրակիները (սկսվում են Բուն բարեկենդանով) ունեն իրենց հատուկ՝ բնորոշող անվանումը: Ուշագրավ է նաեւ, որ այս կիրակիները, Եկեղեցու հայրերի իմաստուն տնօրինությամբ դասդասվելով կողք կողքի, խորհրդաբանական իմաստով ներքին մի ընդհանրությամբ շաղկապվում են միմյանց: Առաջին կիրակին, որով նշանավորվում է մուտքը դեպի Մեծ պահքի խորհրդավոր ճանապարհորդություն, Բուն բարեկենդանի կիրակին է, որը խորհրդանշում է նախաստեղծների դրախտային երջանիկ կյանքը նախքան մեղք գործելն ու Աստծու փափագելի ներկայությունից զրկվելը:

«Բարեկենդան» նշանակում է «բարի կենդանություն, ողջություն», այսինքն՝ այն երանելի վիճակը, երբ դեռեւս միայն բարին էր թագավորում, եւ կարիք չկար մարտնչելու չարի, մարդկային կրքերի ու մեղքերի դեմ: Մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» «բարեկենդան» բառը բացատրում է որպես «բարի» եւ «կենդանություն» բառերից կազմված բարդածանցավոր բառ, որը նշանակում է «երջանիկ կյանք» (հտ. Ա, Երեւան, 1971, էջ 422): «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանը որպես օրինակ է բերում Սամուել Կամրջաձորեցու՝ «Բարեկենդան» անվան բացատրությունը. «Բարեկենդանին կիւրակէն զփափկութիւն դրախտին եւ զբարեկենդանութիւնն օրինակէ» (հտ. Ա, Երեւան, 1979, էջ 450): Մաղաքիա արք. Օրմանյանը Բուն բարեկենդանի մասին խոսելիս մեջբերում է նույն այս հատվածը, սակայն փոխում է սույն բացատրությունը կապել սննդի հետ, իսկ եկեղեցական ծիսակարգին անդրադառնալիս կիրառում է «տխրություն» բառը. «Մեծ պասի ապաշխարության եկեղեցական երգերը եւ վարագույրի փակումը շաբաթ երեկո կատարվելուց հետո, կիրակի օրը եկեղեցական տխրության հետ կերակուրների ուրախությանը նվիրելը, ըստ մեր վարդապետների, «Զփափկութիւն դրախտին եւ զբարեկենդանութիւն օրինակ է», քանի որ Բուն բարեկենդանի կիրակի օրվա խորհուրդը նախահայրերի դրախտային երջանիկ կյանքի հիշատակությունն է պարունակում» (*Մաղաքիա արք. Օրմանյան,* Ծիսական բառարան, Երեւան, 1992, էջ 12):

Այլաբանական իմաստով կարելի է նույնիսկ ասել, որ Բարեկենդանը մարդկության առաջին, անապական երջանկությունն էր՝ շնորհված Աստծուց, որ ասում էր. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա....» Ահա ձեզ տվեցի ողջ երկրի վրա տարածված սերմանելի բոլոր բույսերի սերմերը եւ իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն, իսկ բոլոր կանաչ խոտերը երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների եւ երկրի վրա սողացող բոլոր սողունների՝ բոլոր կենդանիների համար թող լինեն կեր» (հմմտ. Ծննդ. Ա 28–30):

Ամեն բան, արարչագործության յուրաքանչյուր տարր պատկանում էր մարդուն եւ ենթակա էր նրան. ահա դա՛ էր այն առաջին երջանկությունը, որի վերհուշն է ասես Բուն բարեկենադանի տոնը: Հիշատակելով եւ հիշելով դրախտային երանավետությունն ու մարդկային անմեղությունը՝ ինքներս մեր առջեւ ենք պատկերում երջանկության հասնելու ուղին, որ սկսվում է մեղսականության հաղթահարումով եւ անցնելով այս կյանքի անապատային, ոչ դյուրին ճանապարհով՝ իր ապահով, խաղաղ հանգրվանն է գտնում դրախտային պարտեզում:

Բարեկենդանը, սակայն, ոչ թե պահքի ու տրտմության, այլ ուրախության օր է: Ա՛յն ուրախության, որն իրականում քրիստոնեության առանցքն է: Ցավը, տխրությունն ու տառապանքը չեն, որ բնորոշ են քրիստոնեությանը, այլ այդ տառապանքից ազատագրվելու եւ կատարյալ երջանկության բարձունքին հասնելու մասին է քրիստոնեական ողջ վարդապետությունը: Քրիստոս Ինքն աշխարհ էր եկել քրիստոնյաներիս ցույց տալու ո՛չ թե տառապանքի, այլ փրկության ու երանության ուղին:

Բուն բարեկենդանի նախորդ օրը՝ շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը փակվում է, խորանը ծածկվում է, եւ այդպես շարունակվում է քառասնօրյա պահքի ընթացքում: Դա խորհրդանշում է Ադամի արտաքսումը դրախտից, այնուհետեւ՝ մինչեւ Ծաղկազարդ, Ավետարանը չի համբուրվում եւ «Հաւատամքի» ու «Կեցցոյի» ժամանակ չի բարձրացվում՝ ի տես ժողովրդի:

Փոխաբերաբար համեմատական զուգահեռներ անցկացնելով՝ կարելի է հիշատակել, որ համաձայն սուրբ հայրերի մեզ ավանդած գրությունների՝ Բարեկենդանը դրախտային փափկության օրինակն է, իսկ դրախտում եղող ծառերն ու բողբոջները խորհրդանշում են եկեղեցու զավակներին: Կենաց ծառը, որը գտնվում էր դրախտային պարտեզի մեջտեղում, Քրիստոսի նախօրինակն է, քանի որ Նա նույնպես եկեղեցու կենտրոնում է: Իսկ ահա պտղաբեր ծառերն ու բազմազան գույնզգույն, անուշաբույր ծաղիկները նախօրինակն էին առաքյալների, մարգարեների, ավետարանիչների եւ եկեղեցու սուրբ վարդապետների, որոնք, համաձայն Պողոս առաքյալի, «Քրիստոսի բուրմունքն են Աստծու առջեւ» (հմմտ. Բ Կորնթ. Բ 15):

Բուն բարեկենդանը ցույց է տալիս մարդկության՝ այս մարմնեղեն կյանքից դուրս ելնելը, ինչպես Բարեկենդանին հաջորդող օրից սկսած մենք «ելնում» ենք մարմնավոր կերակուրներից, որովհետեւ մինչեւ Սուրբ Հարության տոնն այլեւս չենք ուտելու կենդանական ծագման սնունդ. Սուրբ Հարությունը խորհրդանշում է կյանք մտնելը, քանի որ այդ օրը «ճաշակում ենք» երկնային Գառը, ինչը նշանակում է, որ մենք՝ մեղավոր մարդիկս, Քրիստոսի չարչարանքների միջոցով արժանանում ենք երկնային լուսեղեն խորաններին եւ Տիրոջ անպատում վայելքներին:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Շարական Բուն բարեկենդանի

Հորը էակից եւ Սուրբ Հոգուն համագո Բանն Աստված
Իր պատկերը միախառնեց մեր հողանյութ բնությանը,
Որը փառքով զարդարեց եւ դրեց
Պարտեզի մեջ ուրախության:

Այնտեղ մարդը
Անտխրական խնդությամբ ուրախ էր,
Քանի որ տեսնում էր Աստծուն,
Որ միշտ դրախտ էր իջնում,
Եվ Տիրոջ Լույսի ճառագայթը
Մարդու հոգում էր դրոշմվում:

Արդ, ո՛վ Աստվածամայր Մարիամ,
Աղերսի՛ր Միածին Որդուդ,
Որ ավազակի նման
Մեզ եւս արժանի դարձնի
Վերստին ժառանգելու դրախտը վայելչության:

Գրաբարից փոխադրությունը՝ Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



Արտաքսում Եդեմական

Մեծ պահքի երկրորդ կիրակին Արտաքսման կիրակին է: Այս կիրակին խորհրդանշում է մարդկության նախածնողներ Ադամի ու Եվայի՝ դրախտից առժամանակ արտաքսվելը: Եթե Բուն բարեկենդանի խորհրդածությունը կոչված է արթնացնելու մեր հիշողությունը, թե որտեղից ընկանք եւ ինչ պատիվ ու վայելչություն կորցրինք, ապա Արտաքսման կիրակիի խորհրդածությունը նպատակ ունի սթափեցնելու մեզ, որպեսզի գիտակցենք, թե ուր ենք ընկել ու ինչ անպատիվ եւ անվայել թշվառության մատնվել: Այս աշխարհը, արդարեւ, նախամարդու անկումից հետո լոկ աքսորավայր է, ժամանակավոր պանդխտավայր, որտեղ համայն մարդկությունը, հակառակ խաբուսիկ «առաջընթացին», դատապարտված է ապականության, հիվանդության ու մահվան:

Արտաքսման կիրակիի խորհուրդը նկարագրվում է Ծննդոց գրքում. «Եվ Տեր Աստված արտաքսեց նրան բերկրության դրախտից, որպեսզի նա մշակի այն հողը, որից ստեղծվել էր: Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց բերկրության դրախտի դիմաց եւ հրամայեց քերովբեներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել դեպի կենաց ծառը տանող ճանապարհները» (Գ 23–24):

Արտաքսման կիրակիի խորհուրդը լավագույնս փոխանցում է շարականագիրը՝ ասելով. «Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր, զոր ոչ պահելով նախաստեղծիցն՝ ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութիւն մեղաց եւ մահու. վասն որոյ շնորհեա՛ մեզ, Տէր, ճաշակել զքաղցրութիւն Քոց պատուիրանաց» («Սուրբ պահքի օրենքը նախ դրախտում ավանդեցիր, սակայն նախաստեղծներն այն չպահեցին, այլ պտուղը ճաշակելով՝ մեղքի եւ մահվան դառնությո՛ւնը ճաշակեցին, ուստի, Տե՛ր, Քո պատվիրանների քաղցրության ճաշակումը շնորհի՛ր մեզ»):

Արտաքսման կիրակիի շարականը, նկարագրելով եւ հիշեցնելով Ադամի ու Եվայի՝ դրախտից արտաքսվելը եւ մեղավորների՝ Քրիստոսի միջոցով դարձյալ դրախտին արժանի դառնալու հնարավորությունը, մեզ ուղղորդում է կրկին վերադառնալու այնտեղ եւ այդ ճանապարհին որպես առաջնորդ է կարգում պահեցողության ու ապաշխարության սրբազան խորհուրդը: Հիրավի, Տերը դեռեւս դրախտում էր հաստատել պահքի սրբազան օրենքը, սակայն մեր նախածնողները չպահեցին այն՝ արգելված պտուղն ուտելով եւ այդպես ճաշակելով մեղքի ու մահվան դառնությունը, ուստի մեզ մնում է միայն Տիրոջն աղերսել Իր շնորհների ու քաղցր պատվիրանների ճաշակմանն արժանացնել մեզ՝ մարդասիրաբար բժշկելով մեր մեղքով հիվանդ եւ ցավագար հոգիներն ու մարմինները բազմազան հիվանդություններից ու ողջ աղտեղությունից:

Միով բանիվ՝ ապաշխարության փրկարար խորհուրդն է ամփոփված Արտաքսման կիրակիի խորհրդի մեջ, ինչի մասին է վկայում նաեւ օրվա «Հարց» շարականի հետեւյալ հատվածը. «Կյանքի դրախտից ելնելու համար [մեր] նախահոր տրտմության հետ մենք էլ ընդունենք ապաշխարության տրտմությունը, որպեսզի Քրիստոսի հարությամբ Եկեղեցու դրախտը մտնելուն արժանանանք»:

✠ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ

Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցու հայրապետության շրջան (1866–1882 թթ.)

Սրբալոյս մյուռոնի օրհնությունը Հայ Եկեղեցու մեծաշուք եւ նվիրական արարողություններից է, որը կատարվում է Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ: Այն ունի ինչպես կրոնական, այնպես եւ ազգային վսեմ ու խորհրդավոր նշանակություն: Մյուռոնօրհնության ժամանակ Մայր Աթոռում հավատավոր ժողովրդի ներկայությունը, հայ քրիստոնյայի ջերմեռանդությունը մեկ անգամ եւս վկայում են, որ մեր ազգն անքակտելիորեն կապված է հայոց հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնին: Հիշատակությունների համաձայն՝ մյուռոնօրհնությանը ներկա լինելու համար աշխարհի տարբեր վայրերից Սուրբ Էջմիածին էին գալիս հազարավոր հայորդիներ. գալիս էին Սուրբ Աթոռ՝ իրենց հավատքը նորոգելու, իսկ ոմանք էլ՝ կեղեքող հիվանդություններից բժշկվելու: Անգամ պատերազմների, քաղաքական արգելքների պայմաններում մյուռոնօրհնությանը մասնակցում էին բազմահազար հավատավոր հայորդիներ Էջմիածնից ու շրջակա գյուղերից, Երեւանից:

1868 թ. Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցու անմիջական տնօրհնությամբ եւ օրհնությամբ սկսում է լույս տեսնել «Արարատ» ամսագիրը: Մայր Աթոռի պաշտոնական ամսագրում ուշագրավ տեղեկություններ եւ նկարագրություններ են պահպանվել մյուռոնօրհնության վերաբերյալ: Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցուն բախտ է վիճակվում իր հայրապետության ընթացքում չորս անգամ մյուռոն օրհնել՝ 1868, 1872, 1878 եւ 1882 թվականներին: 1868 թ. սեպտեմբերի 29-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, Գեւորգ Դ կաթողիկոսը կատարում է սրբալոյս մյուռոնի՝ իր անդրանիկ օրհնությունը: Արարողությունից դեռեւս երկու շաբաթ առաջ սկսվել էր ուխտավորների հոսքը դեպի Սուրբ Էջմիածին: Ուխտավորներ էին եկել Կարինից, Վանից, Երզնկայից եւ Ղարսից: Վանեցի ուխտավորներին առաջնորդում էին Մկրտիչ վրդ. Խրիմյանը եւ Երեմիա վարդապետը, իսկ ղարսեցիներին՝ Գրիգորիս վարդապետը: Նաեւ Թիֆլիսից, Գորիից, Նոր Նախիջեւանից, Արցախից, Հին Նախիջեւանի գավառներից, Երեւանից, Ալեքսանդրապոլից, Ախալցխայից էին եկել մյուռոնօրհնությանը մասնակցելու համար («Հանդէս օրհնութեան սրբալոյս իւղոյն միւռոնի», «Արարատ», 1868, էջ 58–60): Մայր Աթոռի հյուրանոցը, վարժատունն ու միաբանների սենյակները լցվել էին ուխտավորներով, անգամ հատուկ վրաններ էին դրվել պարիսպներից դուրս: Համաձայն «Արարատ» ամսագրի՝ *«....հեռաւոր տեղերէ դիմեցին յԱթոռս ի տես հանդիսի օրհնութեան սրբալոյս միւռոնի եւ յարժանաւորութիւն շնորհաց Հոգւոյն Սրբոյ ի ձեռն աղօթից եւ խնդրուածոց առ Աստուած վասն շինութեան աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ. ճանապարհի նեղութիւնը, երկարութիւնը, ոչ ինչ էր նոցա հոգեկան ջերմեռանդութեան յառաջը, իսկ Աթոռոյս մէջ շաբաթներով մնալը՝ աւելի ուրախութիւն....»* (անդ, էջ 61):

Այս մյուռոնօրհնության մասին ուշագրավ տեղեկություններ ենք քաղում արարողության մասնակից Կիրակոս Ղազանչյանի «Ուխտավորի նամակներ» երկից: Հեղինակը 1868 թ. արեւմտահայ ուխտավորների մի խմբի հետ Սուրբ Էջմիածին էր եկել՝ այս նշանակալի իրադարձությանը ներկա լինելու: Նրանց խումբը Սուրբ Էջմիածին է հասնում սեպտեմբերի 23-ին: Այդ ժամանակ ամբողջ Վաղարշապատն արդեն լցված էր Պարսկաստանից, Թուրքիայից, Ռուսաստանից եկած ուխտավորներով, որոնց թիվը հասնում էր 30000-ի, ուստի նրանք մնում են անօթեւան: Երբ Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին տեղեկանում է հեռավոր երկրներից եկած ուխտավորների մասին, իսկույն հրամայում է դատարկել Գեւորգյան ճեմարանն ու մի մասը հատկացնել կարեցիներին ու երիզացիներին, իսկ մյուս մասը՝ քարբերդցիներին ու տիգրանակերտցիներին (*Կ. Ղազանչյան,* Ուխտավորի նամակներ, «Էջմիածին», 2008, Թ, էջ 88–89):

1872-ի մայիսի 21-ի մյուռոնօրհնությունը համընկնում է Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցու կաթողիկոսական օծման հինգերորդ ամյակի հետ: Օրհնության օրը *«....ամենայն հայոց սիրտք ի թունդ կբաբախէին եւ բոցավառ ի խանդ կանձկային նոյն հանդիսի տեսութեան եւ շնորհացն մասնակցութեան, այլ առ այնչափ բազմութեան անձկութիւն Տաճարիս կճմլէին մեր Վեհ Հայրապետի»* («Հանդէս սուրբ միւռոնի օրհնութեան», «Արարատ», 1872, էջ 207): Դեռեւս մյուռոնօրհնությունից մեկ տարի առաջ Սուրբ Էջմիածնի սինոդը Մայր Աթոռ եկող բարեպաշտ ուխտավորների ուղեկցող էր նշանակել վաղարշապատցի Պետրոս Վասակյանցին («Մյուռոնօրհնությունը ԺԹ–ԻԱ դարերում (Փաստաթղթերի նյութերի ժողովածու, աշխ.՝ Ասողիկ քհն. Կարապետյանի, Գ. Ավագյանի, Ս. Էջմիածին, 2015, էջ 138): Արարողությանը ներկա էին նաեւ կառավարության անդամներն ու Երեւանի նահանգապետը («Հանդէս սուրբ միւռոնի օրհնութեան», «Արարատ», 1872, էջ 208–209):

1872 թ. մյուռոնօրհնությունը նկարագրել է նաեւ Վահան ծ. վրդ. Բաստամյանցն իր օրագրական աշխատության մեջ. *«Այսօր կատարուեցաւ Ս. Էջմիածնի տաճարում սուրբ մեռոնի օրհնութեան հանդէսը սքանչելի եկեղեցական եւ արտաքին շքեղութեամբ եւ մեծափառ վայելչութեամբ.... մինչեւ 15 հազար ժողովուրդ աշխարհի ամենայն կողմերից գումարուել էին՝ սուրբ հանդիսին ներկայ գտնուելու համար....»* («Տարեգրութիւն (Ս. Էջմիածին 1872–1880 թթ.)», աշխ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2018, էջ 76):

1878 թ. հունիսի 4-ին երջանկահիշատակ Գեւորգ Դ հայրապետը երրորդ անգամ է մյուռոն օրհնում: Մյուռոնը պետք է օրհնվեր 1877-ի աշնանը. ռուս-թուրքական պատերազմը պատճառ դարձավ, որ արարողությունը հետաձգվի: Այս անգամ Սուրբ Աթոռում հավաքվել էին միայն Երեւանի ու Էջմիածնի հայորդիները, որոնց թիվն անցնում էր 10 000-ից («Սուրբ միւռոնի օրհնութեան հանդէս», «Արարատ» 1878, էջ 273): Քաղաքական հանգամանքներից ելնելով՝ այս նշանակալի տոնախմբությանը չկարողացան մասնակցել հայկական գաղթօջախների՝ Հայ Եկեղեցու հավատավոր զավակները:

1880 թվականից Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին տկարացած եւ ուժասպառ էր, սակայն կարողացավ 1882-ի մայիսի 9-ին եպիսկոպոս ձեռնադրել, իսկ նույն ամսի 16-ին՝ Հոգեգալստյան տոնի օրը, վերջին անգամ մյուռոն օրհնել, ինչպես Մեսրոպ արք. Աշճյանն է գրում. *«....երբ տակաւին կրնար առնական ձայնիւ օրհնել եւ բարձրաձայն երգել»* («Էջեր Հայ Եկեղեցւոյ պատմութենէն», Երեւան, 1994, էջ 86): Օրհնության հանդեսին մասնակցելու համար դեռեւս մայիսից սկսվել էր ուխտավորների հոսքը Ռուսաստանից, Պարսկաստանից, Արեւմտյան Հայաստանից եւ հեռավոր այլ վայրերից: Օրհնության նախընթաց օրը Ս. Էջմիածնի ոչ միայն հյուրատներն ու միաբանական սենյակներն էին լցվել ուխտավորներով, այլ նաեւ՝ խցերն ու տնակները: Վաղարշապատում չկար մի տուն, որտեղ իջեւանած չլիներ 15–20 ուխտավոր: Համաձայն «Արարատ» ամսագրի հաղորդած տեղեկությունների՝ *«....տակաւին Վաղարշապատի հրապարակներն ու փողոցները կվխտային արանց, կանանց, մեծաց եւ փոքունց հայ որերոյ խուռն եւ խիտ բազմութեամբ տեղական եւ շրջակայ գիւղօրէից բնակչօք հանդերձ, որոց ամենից թիւը հաւանականագոյն էր կարծել, որ երեսուն հազարից աւելի էր»* («Սուրբ միւռոնի օրհնութեան հանդէս», «Արարատ», 1882, էջ 210): Մյուռոնօրհնության ընթացքում կարգ ու կանոն պահպանելու համար Երեւանից եկել էր 250 հոգուց բաղկացած բանակ: Ա. Այվազյանի՝ 1882 թ. «Արձագանք»-ում հրատարակված հոդվածի համաձայն՝ Վաղարշապատի ծերերի եւ միաբանների վկայությամբ՝ Սուրբ Էջմիածնում երբեւէ այսքան ուխտավորներ չէին եղել («Հանդէս օրհնութեան սուրբ միւռոնի», «Արձագանք», 1882, թիւ 15, էջ 226):

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

պարտեզից

Արտաքսման կիրակիի ընթերցումներում, որոնք Սուրբ Հոգու իմաստուն առաջնորդությամբ մեզ համար սահմանել են Եկեղեցու հայրերը, աղերսանքներ են՝ ուղղված Աստծուն. «Տէ՛ր, ողորմիր մեզ, քանզի մենք մեր հույսը դրել ենք Քեզ վրա» (Ես. ԼԳ 2): Եվ ապա մարգարեն ամփոփում է իր խոսքն այս հոգեցունց խոստովանությամբ. «Տերն է մեր Հայրը, Տերն է մեր Դատավորը, Տերն է մեր Իշխանը, Տերն է մեր Թագավորը, Տերն է մեր Փրկիչը, Նա՛ է փրկելու մեզ»: Պողոս առաքյալն էլ հորդորում է ոչ միայն պահքի մարմնական ճիգով պատրաստել մեր մարմինները որպես «կենդանի, սուրբ, աստվածահաճո զոհ», այլեւ չկերպարանվել «այս աշխարհի կերպարանքով» եւ նորոգվել «մտքի նորոգությամբ» (հմմտ. Հռոմ. ԺԲ 1–2):

Այնուհետեւ առաքյալը մեզ է ավանդում քրիստոնեության թերեւս կարեւորագույն ուսուցումներից մեկը. «Սեր առանց կեղծիքի. ատելով չարը՝ ընթանալ բարու հետեւից, եղբայրասիրության մեջ միմյանց հանդեպ լինել գթասիրտ, պատիվ տալու մեջ միմյանց գերազանցել, ջանասիրության մեջ չլինել թուլասիրտ. հոգո՛վ եռացեք, Տի՛րոջը ծառայեք, հույսո՛վ ուրախացեք, նեղության համբերե՛ք, հաճախակի աղոթե՛ք, հաղորդակի՛ց եղեք սրբերի կարիքներին, հետամո՛ւտ եղեք հյուրասիրության:

Օրհնե՛ք ձեզ հալածողներին. օրհնե՛ք եւ մի՛ անիծեք. ուրախացողների հետ ուրախանալ, լացողների հետ լալ: Համերա՛շխ եղեք միմյանց հետ, մի՛ մեծամտացեք, այլ խոնա՛րհ եղեք խոնարհների հանդեպ. դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրեք, մեկի չարի փոխարեն չար մի՛ հատուցեք, խորհե՛ք բարին բոլոր մարդկանց առաջ, ինչ չափով հնարավոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղությո՛ւն պահեք.... Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարի՛ով հաղթիր չարին....» (Հռոմ. ԺԲ 9–18, 21): Առաքյալն իր խոսքն ամփոփում է այս հոգենորոգ վերջաբանով. «Եվ ոչ ոքի պարտապան մի՛ մնացեք, բացի միմյանց սիրելուց, քանի որ ով սիրում է ընկերոջը, կատարում է օրենքը: Մի՛ շնացիրը, մի՛ սպանիրը, մի՛ գողացիրը, սուտ մի՛ վկայիրը, մի՛ ցանկացիրը եւ ուրիշ ինչ պատվիրան էլ որ կա, այս խոսքի մեջ է բովանդակվում, թե՝ սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես քո անձը. սերն իր ընկերոջը չար բան չի անի. սերն է օրենքի լրումը....» (Հռոմ. ԺԳ 8–10):

Արդարեւ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարդեղությամբ ու հարությամբ է ողջ մարդկության առջեւ վերստին բացվում դրախտի այդքա՛ն փափագելի ճանապարհը, որով անխոտոր ընթանալու համար Եկեղեցին կոչ է անում մերժել ամեն տեսակի մեղք եւ անօրենություն, աղոթքով ու ապաշխարությամբ պահք պահել՝ համաձայն Ս. Հովհան Մանդակունու խոսքի. «Արդեն իսկ մարդուն ստեղծելիս Աստված պահքի պնդությամբ պարսպեց մեր բնությունը եւ առաջին մարդուն որպես առաջին պատվիրան տվեց պահքի պնդությունը՝ չճաշակել չարի եւ բարու գիտության ծառից: Քանզի եթե պահեր պահքի պատվիրանը, կժառանգեր անախտ, անմահ եւ անմեղ կյանքը եւ երկնքում՝ երկնային բարիքները, քանի որ շատերը, ովքեր պահեցին պահքի պնդությունը, փրկվեցին բազում վշտերից» («Թուղթ պահքի պնդության մասին»):

Ուրեմն, ըստ Քրիստոս Աստծու փրկչական խոսքի՝ «Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ», կատարելության ճանապարհով դեպի երկինք, դեպի կորուսյալ դրախտը վերընթանալու հույսով է, որ քրիստոնյաները պետք է լուսավորեն այս աշխարհային պանդխտության իրենց ուղին՝ վերադառնալու համար այն բերկրալի օթեւանը, որից առժամանակ արտաքսված է մարդ էակը:

Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆ

Սուրբ Աստված, սուրբ եւ հզոր

Սուրբ Աստված, սո՛ւրբ եւ հզոր,
Իմ աղերսանքին՝ կույր ու մեղավոր,
Որպես պատասխան, իբրեւ հատուցում՝
Թող ինձ չդառնա՛ հայացքդ սաստող,
Այլ լո՛ւյսդ շնորհիր, Լո՛ւյս եղիր ինձնում,
Որ մառախուղվի խավարն իմ անշող...

Եվ թող ի տրիտուր
Իմ պաղատանքի՝ անարժան ու թյուր,
Ինձ լռությունդ չմխիթարի,
Այլ Սերը Քո բյուր,
Ո՛վ Մարդասերդ մարդասերների...

Ու ի սփոփություն մեղավոր լացիս՝
Թող չընդդիմանի՛ չարչարանքդ ինձ,
Այլ արտասուքիդ կաթիլն անհատույց
Շաղախվի տոչոր մեղքին իմ անիղձ...

Եվ բյուրադավան իմ շուրթերով պիղծ
Թող սրբությո՛ւնդ քարոզվի անահ,
Ու Քեզ համբարձվող աղոթքն իմ աննինջ
Ամենայն չարիք ու մեղք ուրանա
Հանուն սուրբ Խաչի Քո ամենախնա,
Սուրբ Աստված, սո՛ւրբ եւ անմահ...

Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Անառակ որդու վերադարձը

Մեծ պահքի երրորդ կիրակին կոչվում է Անառակի կիրակի: Այն առնչվում է Հիսուս Քրիստոսի պատմած «Անառակ որդու առակին» (տես Ղուկ. ԺԵ 11–32), որը Նոր Կտակարանի գոհարներից է: Ըստ էության՝ առակը բովանդակում է Ավետարանի հիմնական ուսուցումները, ուստի սույն պատումը հաճախ անվանվում է «Ավետարան Ավետարանի մեջ»: Անառակ որդու առակը զետեղված է միայն Ղուկասի Ավետարանում: Այս փոքրիկ հատվածում նկարագրվում են մեղսալից կյանքով ապրող անառակ որդու զղջումը եւ ապաշխարությամբ վերստին հոր գիրկը դառնալը:

Հիսուս Քրիստոս, յուրաքանչյուրին հորդորելով ապաշխարել, պատմում է մի մեծահարուստ մարդու մասին, որը երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը, հորից պահանջելով նրա ունեցվածքի իր բաժին ժառանգությունը, այն վաճառում է եւ ստացված գումարը վատնում հեռավոր մի երկրում: Շուտով ցոփ ու շվայտ կյանքը նրան հասցնում է ծայրաստիճան չքավորության: Անբարո եւ իմաստազուրկ կյանքով ապրող, անհիրատես անառակ որդին կարճ ժամանակ անց վերջնականապես մատնվում է թշվառության: Վատնելով հայրական ունեցվածքի իր բաժինը՝ ստիպված ծառայության է անցնում որպես խոզապահ, որին արգելված էր նույնիսկ եղջերենու՝ կենդանիներին տրվող պտուղն ուտել:

Անառակ երիտասարդը, լքված ու զրկված հայրական երանելի ջերմությունից, ճաշակում էր միայնության դառնությունը: Անձկությամբ պարուրված եւ օտար երկրի ագարակում խոզերով շրջապատված կրտսեր որդին, վերհիշելով իր նախկին՝ հարմարավետ կյանքը, երբ վայելում էր հայրական ապահով ու խաղաղ հոգածությունը, ափսոսանքով ասում է. «Քանի՞ վարձու աշխատավորներ կան իմ հոր տանը, որ առատ հաց ունեն, եւ ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ գնամ իմ հոր մոտ եւ նրան ասեմ. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ եւ այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրու՛ իբրեւ քո աշխատավորներից մեկը» (Ղուկ. ԺԵ 17–19): Օտարության մեջ սեփական կյանքը նրա համար իրապես դարձել էր թշվառ եւ մեղսալի: Դրամի վերածած այն հարստությունը, որն Անառակն իր հետ «հեռու աշխարհ» էր տարել, հիրավի, մարդկային ժառանգական օրենքով իրեն էր պատկանում, բայց Աստծու օրենքով՝ ոչ. նա չէր դրա արժանի տերը: Նա քրտինքի կաթիլ անգամ չէր թափել այն վաստակելու համար: Ուրիշների չարչարանքով ստեղծված հարստությունը վերցնելն ու անառակների հետ մսխելը, մոխրի վերածելը համազոր էր ավազակության եւ հափշտակության: Միայն ունեցվածքը չէ, որ վատնեց Անառակը, այլ նաեւ իր մարմնական ու հոգեկան կարողությունները:

Անառակ որդին վատնեց նաեւ իր «երիտասարդությունը՝ պարգեւներից ամենացանկալին, իր անմեղությունը՝ հատկություններից ամենահամակրելին, եւ, վերջապես, իր ընտանեկան երջանկությունը՝ փափագելի բարիքներից գերագույնը»:

Անառակ որդին ուժասպառ, մեղքի ծանր լծի տակ կքած, խոր զղջումով, բայց սրտի խոնարհ քաջությամբ վերադառնում է տուն:

Մինչ նա հեռվում էր, հայրը տեսնում է նրան եւ գթածությամբ պարուրվում: Վեր կենալով՝ նա վազում է որդուն ընդառաջ, գրկում եւ համբուրում նրան: Իսկ որդին ասում է հորը. «....մեղանչեցի երկնքի դեմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու» (Ղուկ. ԺԵ 21): Գթասիրտ հայրն անսահման ներողամտություն է ցուցաբերում եւ ի պատասխան ավագ որդու տրտունջին՝ թե ինչու է ուրախությամբ եւ պատվով ընդունում հայրական ունեցվածքը զեխաբար վատնած անառակին, ասում է. «....քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացավ, կորած էր եւ գտնվեց» (Ղուկ. ԺԵ 32): Ահա այս պատասխանի մեջ է ամփոփված առակի բարոյաբանական ողջ իմաստը: Այն մեզ խրատում է, որ հոգեւոր նորոգությամբ, ճշմարիտ զղջմամբ եւ գիտակցված ապաշխարությամբ յուրաքանչյուրս կարող ենք մխիթարվել Աստծու հայրական գթառատ սիրով եւ ողորմածությամբ, հյուրընկալվել Նրա հավիտենական արքայության մեջ եւ մասնակցել մեծ խնջույքին:

Առակն ավարտվում է, եւ չգիտենք՝ արդյոք ավագ որդին մտա՞վ խրախճանքի սրահ, թե՞ ոչ: Առակի երկրորդ մասի վերջաբանը խորհրդավոր կերպով բաց է թողնված, եւ այսպես է արտահայտված Ավետարանի գերագույն իմաստությունը: Հաջորդ քայլը վերապահված է մարդու կամքին. եթե ցանկանա, կմտնի ու կմասնակցի խրախճանքին, իսկ եթե ոչ, իրեն կզրկի այդ ուրախությունից:

Առակում հայրը խորհրդանիշն է երկնավոր Հոր, անառակ որդին՝ մեղսագործ մարդկության, հայրական տունը՝ Եկեղեցու, օտար աշխարհ գնալը՝ Աստծուց հեռանալու եւ մեղքին տրվելու, ստացած հայրական ժառանգությունը վատնելը՝ աստվածային շնորհից մեղքի հետեւանքով զրկվելու, սաստիկ սովը՝ ոգու անմխիթար սովի, որն աստվածային իմաստության եւ առաքինի վարքի պակասությունն է, աստվածային անճառ խոսքին ու շնորհին վերստին անհագուրդ ձգտելը, ինչպես մարգարեն է ասում. «Ահա օրեր պիտի գան,– ասում է Տեր Աստվածը,– եւ ես սով պիտի ուղարկեմ այդ երկիրը, ոչ թե հացի սով կամ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու սով» (Ամոս Ը 11): Ավագ որդու մասին հիշատակությունը սերտորեն փոխկապակցվում է նաեւ այն հրեաներին, որոնք զայրույթ եւ վրդովմունք էին արտահայտում, երբ Հիսուս Քրիստոս սեր եւ ողորմածություն էր ցուցաբերում մեղավորների ու հեթանոսների հանդեպ. նրանք, որպես Հին Ուխտի ներկայացուցիչներ, «հրաժարվում էին երկնքի արքայություն մտնելուց»:

Սատանան, կամենալով անհուսորեն վշտացնել անառակ որդուն, նրան ուղարկում է խոզեր պահելու: Սատանայի ագարակն այն վայրն է, որտեղ կան բազմաթիվ ծառեր, որոնք, սակայն, երկնավոր Հայրը չի տնկել, եւ որտեղ կան խոզեր, որ կոխկրտում են մարգարիտը: Կրտսեր որդին խոզեր էր պահում, այսինքն՝ այնպիսիներին, որոնք մարմնական ցանկություններին են հագուրդ տալիս եւ անհույս գլորվում մարդկային թշվառ ժանտահոտության մեջ, այնպիսիներին, որոնք պիղծ հոգով են լցված եւ պարարտացնում են մարմինը, բայց ոչ՝ հոգին, քանզի խոզը բղջախոհների ու մարմնապաշտների խորհրդանիշն է: Դեւերը մղում են բղջախոհության, քանզի այն մարդուն լիովին հեռացնում է Աստծուց եւ գլորում եղծելի կյանքի անդունդը. պատահական չէ, որ դեւերը խնդրեցին Տիրոջը թույլ տալ բնակվել խոզերի մեջ (հմմտ. Մատթ. Ը 31):

Գրկաբաց ընդունելով տուն դարձած որդուն՝ հայրն ասում է. «Անմիջապես հանե՛ք նրա նախկին պատմուճանը եւ հագցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրե՛ք եւ նրա ոտքերին՝ կոշիկնե՛ր. բերե՛ք պարարտ եզը, մորթե՛ք, ուտենք եւ ուրախ լինենք....» (Ղուկ. ԺԵ 22–23): Վերջին խոսքերը խորհրդանշում են Հայր Աստծու կողմից Իր միածին Որդուն՝ որպես անուշահոտ զոհ եւ պատարագ, երկիր ուղարկելը՝ ի քավություն համայն մարդկության մեղքի: Նախկին պատմուճանը հագցնելը խորհրդանշում է անառակի զղջմամբ եւ ապաշխարությամբ արժանի է դառնալն այն լուսեղեն պատմուճանին, որ Ադամն ու Եվան մինչեւ պատվիրանազանցությունը կրում էին դրախտում՝ Աստծու անմիջական ներկայության եւ խնամքի ներքո: Նույնը վերաբերում է կոշիկներին ու մատանուն. կոշիկները խորհրդանշում են հավատի ամրությունն ու զորությունը, քանի որ օձը՝ սատանան, գայթակղիչ է, մարդու գարշապարն է խայթում: Ուստի որքան ամուր լինի կոշիկը, այնքան մարդն ավելի հաստատուն հավատով կդիմակայի գայթակղության անսպասելի խայթոցին: Ս. Գրիգոր Տաթեւացին շեշտում է, որ ստրուկներն իրավունք չունեին կոշիկ հագնելու եւ մատանի կրելու: Ուստի դրանք Անառակին տալը խորհրդանշում է մեղքի ստրկությունից նրա ազատագրվելը: Մատանին խորհրդանշում է նաեւ թագավորական իշխանությունը: Ինչպես դրամի, այնպես եւ մատանու վրա որպես կնիք պատկերվում էր թագավորը, հետեւաբար մատանու հանձնելը խորհրդանշում է աստվածային պատկերի վերականգնումը, որը խաթարվել էր Ադամի ու Եվայի անհնազանդությամբ: Մարդը երկար չմնաց դրախտում. պատվիրանազանցությունից անմիջապես հետո արտաքսվեց: Չկա Աստծուց հեռու որեւէ տեղ, քանզի Նա ամենուր մեզ հետ է, այլ պարզապես մահացու մեղքն է մարդուն հեռացնում Արարչից. «Ես մերձավոր Աստված եմ եւ ոչ թե հեռավոր» (Երեմ. ԻԳ 23), նաեւ՝ «Ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր եւ Աստծու միջեւ» (Ես. ԾԹ 2):

Կյանքում բոլորս էլ քիչ թե շատ նմանվում ենք անառակ որդուն, քանզի մարդը սխալական է իր բնությամբ: Մեղքերը ծանր քարի նման ճնշում են մեր խիղճը եւ մեզ հեռացնում Աստծուց: Անառակ որդին չուներ անհրաժեշտ հասունություն եւ կյանքի փորձառություն, սակայն կարողացավ իր մեջ ուժ գտնել ու վերադառնալ: Մեր երկնավոր Հայրն սպասում է բոլորին. Նա արդարացիորեն միշտ էլ բարեգութ է եւ ողորմածաբար Իր գիրկն է ընդունում բոլոր զղջացողներին, քանզի Աստված «մեղավորների մահը չի ցանկանում, այլ բոլորիս փրկությունը», ինչպես որ Քրիստոս Իր քարոզչության սկզբում ասաց. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության» (Ղուկ. Ե 32): Սիոն արք. Մանուկյանն ասում է. «Աստված Հայրն է բոլոր անառակ որդիների, որոնց դարձին եւ զղջմանն է սպասում, որպեսզի նրանց գրկի եւ համբուրի: Ո՜վ հավատացյալ, Տերը քեզ է սպասում, գնա՛, նետվի՛ր Նրա գիրկը եւ խոստովանի՛ր. «Հայր, մեղանչեցի երկնքի եւ քո առաջ»: Դրանից հետո Նա սիրո ժպիտով քեզ կդիմավորի, կգրկի եւ հայրական սիրո ու ներման համբույրներ կդրոշմի ճակատիդ»:

Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ

Ճարական Անառակի կիրակիի

Լույսից Լույս, Ծնունդ եւ Ծագում,
Որ եկար փնտրելու ոչխարի նման մոլորված մարդկությանը.
Որ խաչիդ հետ ուսիդ առար,
Մաքրի՛ր մեզ մեր մեղքերից:

Սրբերի Սուրբ եւ էակներին սրբացնող,
Որ տունդ ավլեցիր՝ աշխարհը մեղքից մաքրելով,
Նրանում Քո պատկերը գտար եւ նորոգեցիր,
Մեզ էլ նորոգիր հնացած մեղքերից:

Անառակ որդու հետ Քեզ ենք կանչում, Հայր գթած,
Մեղք գործեցինք երկնքի դեմ եւ Քո առաջ, Քավի՛չ հանցանքների,
Ընդառաջ արի սիրով, գրկի՛ր, համբուրի՛ր
Մեզ մեր մեղքերից մաքրելու համար:

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19–2023-ի թիվ 4

Նամակ քսանիններորդ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵՔ

Կյանքի մեծագույն արժեքներից մեկն ուղեւորություններն են հայրենի երկրում եւ օտար երկրներում: Ընդ որում՝ զգուշացեք ուղեւորությունները հետաքրքիրի եւ անհետաքրքիրի բաժանելուց, իսկ վայրերը, որոնք այցելել եք, կարեւորի եւ անկարեւորի: Նույնիսկ ձեր այցելած վայրերի կարեւորության աստիճանն աշխատեք չորոշել: Ուղեւորությունները բաժանեք այնպիսիների, որոնց նախապատրաստվել էիք, եւ այնպիսիների, որոնց չէիք պատրաստվել կամ վատ էիք պատրաստվել: Ցանկացած քաղաք, ցանկացած երկիր, ցանկացած վայր, ուր ուղեւորվելու համար չեք պատրաստվել, անհետաքրքիր եւ ձանձրալի է: Եվ ընդհակառակը՝ եթե գիտեք վայրի պատմությունը, այն տասնապատիկ ավելի հետաքրքիր է դառնում:

Ինչ է նշանակում պատրաստվել ուղեւորության դեպի անծանոթ քաղաք. քաղաք, որտեղ դեռեւս չեք եղել: Նշանակում է ուսումնասիրել դրա պատմությունը, իմանալ դրա հատակագիծը՝ թեկուզեւ զբոսաշրջային գծապատկերի ձեւով, քարտեզի վրա նախապես նշել բոլոր այն վայրերը, որոնք պետք է այցելել, եւ մոտավոր երթուղիները՝ ժամանակ չկորցնելու համար:

Բաց մի թողեք հետաքրքիրը գտնելու հնարավորությունը նույնիսկ այնտեղ, որտեղ ձեզ թվում է, թե անհետաքրքիր է: Երկրի վրա անհետաքրքիր վայրեր չկան. կան միայն չհետաքրքրվող մարդիկ՝ հետաքրքիրը գտնել չկարողացող, ներքուստ ձանձրալի մարդիկ:

Ինձ համար միշտ տհաճ են այն մարդիկ, որոնք այցելելով իրենց համար նոր վայրեր՝ ձանձրացող տեսքով ասում են իրենց ուղեկիցներին. «Իսկ ահա ես եղել եմ Փարիզում.... այսպիսով այնտեղ....»: Պետք է կարողանալ ընկղմվել այն վայրի մթնոլորտի մեջ, որտեղ ձեզ նետել է ճակատագիրը, եւ ամենուր կարողանալ գտնել իրենը, սեփականը, բնորոշիչը: Այս կարողությունը, իհարկե, տրվում է ոչ միայն վերացական ցանկությամբ, այլ նաեւ գիտելիքներով: Եվ հատկապես կարեւոր են այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել մինչ ուղեւորությունը:

Միշտ հետաքրքիր են նկարիչների տպավորությունները: Ընթերցե՛ք նկարիչների գրառումներն ու հիշողություններն իրենց ուղեւորությունների մասին: Չգիտեմ՝ ինչու, սակայն բոլոր նկարիչները զարմանալիորեն լավ են գրում: Հրաշալի գրողներ են Կորովինը, Բենուան, Դոբուժինսկին, Գրաբարը...

Ինչպե՞ս էին նրանք կարողանում նայել եւ տեսնել, իսկ հետո պատկերել տեսածը ոչ միայն գեղանկարչության մեջ, այլեւ իրենց գրառումներում:

Մ. Վ. Դոբուժինսկին իր հուշերում գրում է, թե իր երիտասարդության տարիներին ինչպիսի մեծ տպավորություն են թողել Մյունխենը, Վենետիկը եւ Փարիզը, երբ առաջին անգամ այցելել է դրանք: Նա ստիպված էր հանկարծակի վերադառնալ Ռուսաստան (արտասահմանում անսպասելիորեն մահացավ Դոբուժինսկիների փոքրիկ որդին, որին նրանք որոշեցին հուղարկավորել հայրենի Վիլնյուսում): Եվ ահա Մյունխենից, Փարիզից եւ Վենետիկից հետո նա հայտնվում է լիտվական փոքրիկ գերեզմանների միջեւ: Եվ ահա թե ինչ է գրում նա. «Կնոջս հետ հաճախ էինք կառքով գնում մայրուղով կամ անտառի միջով՝ Նեմանի ուղղությամբ կամ դաշտերի երկայնքով, եւ ես կրկին տեսնում էի տխուր ու սիրելի լիտվական բնապատկերը. ավազադաշտեր, եւ նրանց միջեւ, որպես կանաչ օազիսներ, ռոմանտիկ գերեզմանները՝ ծածկված բարձր խաչերով ու սոճիներով, եւ աշնանային գորշ երկինքը՝ դանդաղ թռչող միայնակ ագռավով:



Այդ գերեզմանները, փորագրված լիտվական խաչերը, հորիզոնի անտառները եւ աղքատիկ Օլիտա գյուղաքաղաքը, որտեղ կանգնած էր փայտե կարմիր հին եկեղեցին, ես ճանաչում եւ սիրում էի դեռեւս Մյունխեն այցելությունից առաջ, սակայն հիմա՝ այն ամենից հետո, ինչ տեսել եմ արտասահմանում, այդ անկյունն ինձ թվաց չափազանց ինքնատիպ:

Մենք եղանք Վիլնյուսում, եւ կրկին իմ սիրելի քաղաքն ինձ հմայեց: Եվ ապագայում Վիլնոն՝ իր սքանչելի, նրբագեղ բարոկկոյով (արտասահման իմ յուրաքանչյուր ճանապարհորդությունից հետո, երբ ես Պետերբուրգ այցելելով՝ այնտեղ էի գնում) միշտ համեմատության հաջող քննություն էր բռնում» (*М. В. Добужинский*, Воспоминания, Москва, 1987, էջ 171):

Ահա սա իսկապես խելացի մարդու իսկական ձեռքբերումն է իր ուղեւորություններից եւ ճամփորդություններից. ներքուստ հարուստ մարդու համար իրեն շրջապատող ողջ աշխարհն անսպառ հարուստ է:

Եվ երկրորդ՝ ուղեւորությունները դաստիարակում են հաստատունություն՝ բարոյական հաստատունություն, սեր առ հայրենին:

Երբ առիթ ունենաք լինելու նոր քաղաքում, դիտեք արվեստի հռչակավոր գործերը կամ հանրահայտ բնապատկերները, տեղի մի տվեք այն իրողությանը, որ դրանց մասին լսել եք, ընթերցել, որոնց մասին ձեր «ականջը տարել են»: Ձեր ընթերցածի մեծագույն մասը կօգնի հասկանալու տեսածի գեղեցկությունն ու արժեքը, սակայն կարող է մասամբ նաեւ խանգարել սեփական՝ ձեր անհատական տպավորություններին: Գնահատեք սեփականը, սակայն գնահատեք անկեղծորեն եւ մի ջանացեք ամեն գնով հակասել ընդհանուր կարծիքին (դա նույնպես հաճախ է հանդիպում խիստ ինքնասեր մարդկանց շրջանում):

Օրինակ բերեմ սեփական տպավորություններից (ցանկանում եք ընդունել այս տպավորությունները, ցանկանում եք՝ ոչ): Ես հին պետերբուրգցի-լենինգրադցի եմ: Ծնվել եմ Պետերբուրգում, եւ այնտեղ են ծնվել նաեւ իմ ծնողները, նախածնողները: ԺԸ դարից ի վեր իմ նախնիներն ապրել են Պետերբուրգում:

Ինձ մանկուց շարունակ ներշնչել են, թե որքան գեղեցիկ է Նեւան. որքան մեծաշուք է Նեւայի կենտրոնը, որքան հանդիսավոր է Նեւայով լադոգյան սառույցի երթը, ինչպիսի շքեղություն է հաղորդում քաղաքին Պետրոպավլովյան ամրոցի ասեղը, որքան գեղեցիկ է միջօրեի՝ ուղիղ ժամը 12-ին, ավանդական կրակոցը Պետրոպավլովյան ամրոցի թնդանոթից:

Անվիճելի է, որ Նեւայի կենտրոնն իր ամենալայն մասում գեղեցիկ է: Բայց, չգիտես՝ ինչու, այդ կենտրոնը տխրություն է բերում վրաս: Այն ամենատխուր եւ ամենաթախծոտ վայրերից է, որ տեսել եմ իմ քաղաքում, հատկապես երբ Ձմեռային ջրանցքից նայում ես Պետրոպավլովյան ամրոցին: Սիրտ է ճմլվում թախիծից... Հնարավո՞ր է, որ մանկուց լսել եմ ամրոցի բանտարկյալների մասին, ու երեխա ժամանակ վրաս առանձնահատուկ տպավորություն է գործել սարսափելի զրույցն իշխանուհի Տարականովայի մասին, որն իր խցում խեղդվել էր ներս խուժած ջրհեղեղի պատճառով: Չգիտեմ... Եվ աշխարհի գարնանային ամենագեղեցիկ սառցաերթն այդպիսով իմ մեջ զուգակցվում է ողջ գոյություն ունեցողի խավար անցողիկության հետ:

Իսկ որքա՜ն լավն են Պետերբուրգի առավել անձնական վայրերը՝ հատկապես ջրանցքները: Ի՞նչը կարող է առավել գեղեցիկ լինել, քան զարմանահրաշ անկյունները, որոնք բացվում են, երբ քայլում ես Մոյկայով (օրինակ՝ Պուշկինի վերջին բնակարանի մոտ), Գրիբոյեդովի ջրանցքով (հատկապես արծվառյուծներով կամրջակի մոտ), Կրյուկովի ջրանցքով (հիշեք զանգակատան մասին, որ կառուցել է Չեւակինսկին «Նիկոլայ Մորսկոյի» մոտ), Ֆոնտանկայով: Պետերբուրգի ամենագեղեցիկ վայրերից մեկը Նոր Հոլանդիան է, հատկապես՝ Դելամոտի կառուցած նրա մուտքը (ցանկանում եմ ասել «դրունք»), որը ներս է թողնում ջրանցքը, որով ապրանքները պահեստներ էին բերում: Հատկապես սիրում եմ Գրիբոյեդովի (Եկատերինյան) ջրանցքը, որտեղ փողոցների ճշգրիտ դասավորության մեջ այն ոլորապտույտ է կատարում՝ հիշեցնելով լատինական «S» տառը. նայում ես առաջ՝ ջրանցքն է՝ վրայով անցնող հրաշալի կամրջով: Նայում ես հետ՝ կրկին այդ նույն ջրանցքն է: Ջրանցքն աշխուժություն եւ անկարգություն է բերում փողոցների պետական կարգուկանոնի մեջ, եւ պատահական չէ, որ Դոստոեւսկին այդ փողոցները դարձրեց իր «Ոճիր եւ պատիժ» վեպի գործողության վայր: Ռասկոլնիկովի դատողությունները թվացյալ կերպով կարգավորում են կյանքը, իսկ այն իրականում հոսում է իր օրենքներով: Ջուրը հոսում է ջրանցքում, ինչպես հոսում է կյանքը: Ջրանցքը կամ «ջրառուն», ինչպես այն անվանում է Դոստոեւսկին, «ողողել» է փողոցների պետական ճշգրիտ դասավորվածությունը: Ծայրից ծայր անցեք Գրիբոյեդովի ջրանցքով, Մոյկայով, Կրուշտեյնի ջրանցքով... Իսկ Մոսկվայում անցեք ողջ հին Արբատով՝ Սիվցեւ Վրաժեկով:

Քաղաքը խորհրդածությունների տեղիք է տալիս: Խորհրդածությունների տեղիք է տալիս Օրյոլը՝ նրա այն մասը, որտեղ տեղի են ունեցել Տուրգենեւի «Ազնվական բույն» վեպի գործողությունները, կամ՝ Օրլիկ գետը, որի մոտ ապրում էր Ն. Ս. Լեսկովի հիանալի «Անմահ Գոլովանը» ստեղծագործության հերոսը: Իսկ վոլգյան քաղաքների ափերի երկայնքով ձգվող հիասքանչ ծառուղիները՝ Սիմբիրսկի, Յարոսլավլի, Կոստրոմայի, Նիժնիի... Մի՞թե չեն ստիպում մեզ մտածել Օստրովսկու, Գորկու, Գոնչարովի հետ միասին:

Ճանապարհորդությունները շատ բան են մեզ համար բացահայտում, շատ բաների մասին են ստիպում մտածել, երազել:

Նամակ երեսուներորդ
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Ահա թե ինչի մասին կցանկանայի ասել. «Նշումներ ռուսականի մասին» եւ «Երկխոսություններ երեկվա, այսօրվա եւ վաղվա օրվա վերաբերյալ» երկերում ես արդեն ուշադրություն եմ հրավիրել ռուսական բնավորության որոշ գծերի վրա, որոնց վերջին ժամանակներում մի տեսակ ընդունված չէ ուշադրություն դարձնել. բարության, բացության, հանդուրժողականության, ազգային սնապարծության բացակայության վրա եւ այլն: Ընթերցողն իրավունք ունի հարցնելու՝ իսկ ո՞ւր են կորել «Նշումներում» ռուս մարդու բացասական գծերը: Մի՞թե ռուսներին միայն դրական հատկանիշներ են բնորոշ, իսկ մյուս ժողովուրդները դրանցից զրկված են: Ցանկության դեպքում ընթերցողը վերջին հարցի պատասխանը կգտնի հենց «Նշումների» մեջ. ես դրանցում խոսում եմ ոչ միայն ռուս ժողովրդի մասին: Իսկ ինչ վերաբերում է ռուսական թերություններին առաջին հարցին, ապա ամենեւին չեմ կարծում, որ ռուս ժողովուրդը զուրկ է դրանցից. ընդհակառակը՝ դրանցից նա շատ ունի, բայց... Կարո՞ղ ենք արդյոք ժողովրդին բնութագրել իր թերություններով: Չէ՞ որ, երբ գրվում է արվեստի պատմությունը, դրանում ընդգրկվում են միայն բարձրագույն նվաճումները, լավագույն ստեղծագործությունները: Միջակ կամ վատ ստեղծագործություններով չի կարելի գեղանկարչության կամ գրականության պատմություն կառուցել: Եթե ցանկանում ենք պատկերացում կազմել ինչ-որ մի քաղաքի մասին, ապա ամենից առաջ կծանոթանանք նրա լավագույն շենքերին, հրապարակներին, հուշարձաններին, փողոցներին, լավագույն տեսարաններին՝ «քաղաքային բնապատկերներին»: Այլ բան է, երբ ծանոթանում ենք առանձին մարդկանց հետ՝ նրանց բժշկական կամ բարոյական կողմից: Իսկ մենք անդրադառնում ենք ժողովրդի մասին պատկերացումներին: Ժողովուրդը որպես արվեստի ստեղծագործություն. այսպիսին է իմ դիրքորոշումը «Նշումներում»՝ ժողովուրդներից ցանկացածի նկատմամբ իմ մոտեցման մեջ:

Յուրաքանչյուր ժողովրդի մասին պետք է դատել այն բարոյական բարձունքներով եւ այն կատարելատիպերով, որոնցով նա ապրում է: Բարյացկամություն յուրաքանչյուր ազգի՝ ամենասակավաթիվի նկատմամբ: Այս դիրքորոշումն ամենաճիշտն է, ամենաազնիվը: Ընդհանրապես ասած ցանկացած անբարյացկամություն միշտ անհասկացության պատեր է կանգնեցնում:

Բարյացկամությունը, ընդհակառակը, բացում է ճիշտ ճանաչման ուղիները:

Ինքնաթիռը գետնին չի ընկնում ոչ թե այն պատճառով, որ այն թեւերով «հենվում է օդին», այլ այն, որ օդը ներքաշելով՝ ընթանում է վեր՝ երկինք... Ժողովրդի մեջ ամենագլխավորը նրա կատարելատիպերն են:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՂԵԿՅԱՆԻ

Ս. Ներսես Շնորհալու հանելուկները

Հանելուկներն ի սկզբանե բանահյուսության մաս են կազմել, ապա փոխանցվել գրականությանը: Ըստ Ա. Դոլուխանյանի՝ «Հանելուկում իրը, առարկան, երեւույթն արտահայտվում է մետաֆորի, փոխաբերության միջոցով, դրա համար էլ հանելուկներն ունեն այլաբանական իմաստ» («Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը», Երեւան, 2012, էջ 83): Գրավոր առաջին հանելուկները հայ գրականության մեջ մշակել է Դավիթ Քերթողը Ե դարի առաջին կեսին. նրա մշակած 10 հանելուկները սիրվել ու տարածվել են: Է դարում Անանիա Շիրակացին ստեղծել է թվաբանական խնդիր-հանելուկների շարք՝ «Հանելուկ դիմակք» խորագրով: Այս հանելուկաշարքը եւս մեծ տարածում է գտել, հիմք հանդիսացել բազմաթիվ տարբերակների առաջացման եւ համանման նոր միավորների ստեղծման: Ե–ԺԱ դարերի ընթացքում ստեղծված հանելուկները եղել են ազատ՝ առանց հանգերի: Կայուն ձեւեր չեն եղել նաեւ տողաքանակի առումով. հանդիպել են մեկից մինչեւ մի քանի տող ունեցող հանելուկներ: Ա. Մնացականյանը հայ միջնադարյան հանելուկների դասական շրջանի սկզբնավորող է համարում Ս. Ներսես Շնորհալուն, որը կատարելագործեց հանելուկի ժանրը: Ս. Ներսես Շնորհալին օգտագործել է ժողովրդական հանելուկները լիարժեքորեն՝ թե՛ ձեւի, թե՛ բովանդակության առումով. «Ներսես Շնորհալուց առաջ գրված հանելուկները ազատ ու անհանգ ոտանավորներ են՝ անկայուն տներով: Նա առաջին անգամ մշակում է գրավոր հանելուկի բանաստեղծական կայուն ձեւ՝ ութվանկանի նույնահանգ քառյակը» (*Ա. Մնացականյան,* Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երեւան, 1980, էջ 13):

Հանելուկները շատ տարածված ու սիրված են եղել միջնադարում: Ա. Մնացականյանը նշում է, որ հանելուկներ են ասվել հարսանիքներին, խնջույքներին, հավաքներին, ընտանեկան տոնախմբություններին եւ դպրոցներում: Ժողովրդական հանելուկներն առավել մեծ տարածում ունեին, քան հեղինակայինները. առաջիններին կարող էին ծանոթ լինել բոլորը՝ դեռ մանկությունից, ինչի համար հատուկ գրագիտություն չէր պահանջվում, մինչդեռ հեղինակային հանելուկները պահանջում էին գրագիտություն, ձեռագրերից օգտվելու կարողություն, գրական լեզվի իմացություն (տես անդ): Ս. Ներսես Շնորհալին իր հանելուկներով հաղթահարում է այս անջրպետը: Նրա հանելուկները նորույթ էին ոչ միայն ժողովրդական բանահյուսության հիմքի վրա ստեղծվելու, մտածողության ձեւի, բովանդակության, ոճական առանձնահատկությունների, այլեւ հատկապես լեզվի առումով: Ժողովրդական լայն զանգվածների կրթությունը կարելի էր իրականացնել նրան հասկանալի լեզվով միայն: Գիտակցելով այս կարեւոր հանգամանքը՝ Ս. Ներսես Շնորհալին հանելուկների մեծ մասը գրել է ԺԲ դարի ժողովրդական-խոսակցական լեզվով՝ միջին հայերենով:

Ս. Ներսես Շնորհալու մշակած հանելուկներն իրենց հիմքում պահպանել են ժողովրդական հանելուկներին բնորոշ հիմնական առանձնահատկությունները: Ժողովրդական հանելուկների նման գրական մշակման ենթարկված հանելուկները եւս ունեն երկմասային կառուցվածք.

1. համեմատության, փոխաբերության, հակադրության, անձնավորման եւ այլ միջոցներով կառուցված գեղարվեստական պատկեր-առաջադրանք,
2. լուծում եւ պատասխան:

Գրական տեսակի աստիճանին բարձրացնելով հանելուկները՝ Ս. Ներսես Շնորհալու նպատակն է եղել զվարճացնելով կրթել ժողովրդական լայն զանգվածներին: Ն. Թահմիզյանը նշում է՝ «փաստերը ցույց են տալիս, որ անցյալում ինչպես այլուր, այնպես եւ հայ իրականության մեջ հանելուկները նույնպես ընդգրկվել են ժողովրդական եւ ժողովրդային-մասնագիտացված (գուսանական-աշուղական) երգարվեստի ոլորտում: Հայ ժողովրդական ստեղծագործության մեջ եղել են նաեւ «երգային» հանելուկներ: Ժողովրդական հանելուկներն աղերսվել են ինչպես հեքիաթների, առածների, դյութանքի բանաձեւ-աղոթքների (որոնք ժամանակին երգվել են), այնպես եւ խաղերի կամ խաղիկների հետ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խաղիկներից հանելուկներին անցել են պատրաստի պատկերներ, համեմատություններ ու ընդհանրություններ (տես *Ն. Թահմիզյան,* Ներսես Շնորհալին երգահան եւ երաժիշտ, Երեւան, 1973, էջ 28–29): Հայկական հանելուկների մեծ մասը չափածո է, իսկ չափերն էլ հիմնականում կարճ են՝ գերակշիռ մասը 4+4 չափով. «Ուշագրավ է, որ նման կառուցվածքի հանելուկներում երբեմն առաջին անդամի սկզբում մի վանկ պակաս է լինում: Այսպիսի դեպքերում եռավանկ մնացած առաջին անդամի առաջին վանկը կրում է «երկար»-ի նշանը (որ գրչագրերից է անցել տպագրին): Եվ դա նշանակում է,

թե ոտանավորի հաստատուն կշռույթի մեջ մեկ վանկի պակասը պիտի լրացնել՝ «երկար»-ի նշանը կրող վանկը համապատասխան չափով երկարելով, որ միջնադարում իրագործվել է կամ ոգելու (եղանակավոր ասելու, ասերգելու) եւ կամ էլ երգելու միջոցով» (անդ, էջ 30): Այս ամենից կարելի է ենթադրել, որ Ս. Ներսես Շնորհալին իր հանելուկների մի մասը գոնե հորինել է որպես աշխարհիկ երգեր: Դա է վկայում նաեւ «Առակք վասն մարդկան ուրախութեան» վերտառությունը:

Ա. Դոլուխանյանը «Հոգու եւ մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» գրքում քննում է նաեւ Ս. Ներսես Շնորհալու հանելուկները: Հայոց հայրապետի ստեղծած երգերը հետագայում միջնադարյան մտածողները համարել են «ասացեալ վասն հոգոյ եւ մարմնոյ»: «Այսպես «հոգոյ եւ մարմնոյ» ասելով՝ չպետք է հասկանալ հոգու եւ մարմնի մասին, որովհետեւ ողջ կրոնական բանաստեղծությունն է այդպիսին, այլ պետք է հասկանալ այնպիսի երկեր, ուր մարմինն էլ է իրավունք ստանում.... Մինչ այդ գրված բոլոր երգերը անխտիր կարող էին կոչվել «հոգեւոր»: Արդ, ուրեմն, մարմինն էլ է գրվում որպես խորագիր» (*Ա. Դոլուխանյան,* Հոգու եւ մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ, Երեւան, 1987, էջ 90): Ս. Ներսես Շնորհալու հանելուկները նորույթ էին նաեւ այս առումով: Ըստ հոգեւոր եւ աշխարհիկ բաժինների՝ «որպես հոգուն ծառայող հանելուկներ տեղ են գտնում զանազան եկեղեցական սրբերի եւ կրոնական հասկացությունների մասին գրված տողեր, իսկ մարմնին ծառայող՝ աշխարհիկ թեմաներով հորինվածները» (անդ, էջ 91):

Այսպես՝ Ս. Ներսես Շնորհալու հանելուկները բաժանվում են երկու խմբի՝ կրոնական եւ աշխարհիկ: Պ. Աղբաշյանը կրոնական բնույթի հանելուկների մասին ասում է, որ «այս թեմայով գրուած հանելուկները համեմատաբար սակաւ են ու կեանքէն կտրուած, նոյնիսկ՝ բռնագբօսիկ ու անհասկնալի» («Շիրակ» (ամսագիր գրականութեան եւ արուեստներու), Բէյրութ, 1973, թ. 11–12, էջ 24): Աշխարհականացման այդ շրջանում, ինչ խոսք, գուցե այս հանելուկների այդքան էլ չէին հետաքրքրում ժողովրդին աշխարհիկ թեմաներով գրված հանելուկների համեմատ, բայց կրոնական միջնադարում հոգեւոր բնույթի հանելուկների ամբողջովին չէին կարող կտրված լինել կյանքից: Մյուս կողմից՝ ինչպես իր այլ ստեղծագործություններով, հանելուկների միջոցով եւս Ս. Ներսես Շնորհալին լուծում էր կրթադաստիարակչական խնդիրներ: Տեսնենք, թե ում կամ ինչի մասին էին կրոնական հանելուկները. Աստված, դրախտ, Ադամ ու Եվա, եդեմական ծառ, Աբել եւ Կայեն, Նոյ, տապան, նավ, Բաբելոնի աշտարակ, Աբրահամ, Ղովտ, Մելքիսեդեկ, Իսահակ, Հակոբ, Հովսեփ, փարավոն, Թամար, Մովսես, Ահարոն, Մարիամ, Հեսու, Երիքով, Եփրեմ, Սամսոն, Աննա, Դավիթ, Սամուել, Նաթան, Սողոմոն, Եղիա, Հովաս, Հոբ, Երեմիա, Եզեկիել, Դանիել, Հովնան, Գաբրիել, Մարիամ եւ Հովսեփ, Հերովդես, Հովհաննես, Քրիստոս եւ առաքյալներ, ավետարանիչներ, Պիղատոս, Հուդա, խաչ, Պողոս, Պետրոս եւ այլն: Եթե ուշադիր նայենք այս հերթականությանը, կտեսնենք Հին ու Նոր Կտակարանների գլխավոր գործող անձանց: Այսինքն՝ ընդամենը մի քանի տասնյակ հանելուկներում Ս. Ներսես Շնորհալին ընդգրկել է Աստվածաշնչի ամբողջ նյութը: Նա ուներ հստակ նպատակադրում. մատչելի, հակիրճ, ընթերցողին հետաքրքիր ու հաճելի տարբերակով, հասկանալի լեզվով սովորեցնել Սուրբ Գրքի բովանդակությունը, ինչն իր հերթին կօգներ ամուր պահել հավատը, չշեղվել ճիշտ ճանապարհից:

Կրոնական որոշ հանելուկներ վերաբերում են հայ եւ օտարազգի հոգեւորականներին, նրանց թերություններին ու բացասական կողմերին:

Շարունակելի

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

Ձմրուխտ վազերի սգերգը

Սկիզբը՝ 2022-ի թիվ 14–16

Վետստալինյան տարիների ամբողջ Խորհրդային Միությունն արմատական բուռն փոփոխությունների հորձանուտում էր: ԽՍՀՄ նոր ղեկավար Նիկիտա Խրուշչովն առաջնահերթ վնասազերծեց Ստալինի մոլեռանդ կամակատար, դահիճ Բերիային: Նրան հաջողվեց հետեւողականորեն ջախջախել ստալինիզմի գաղափարախոսությունը, վեր հանել երկրին ու ժողովրդին պատուհասած անհատի պաշտամունքի ահռելի վնասները, ստալինյան բռնապետության անհամբելի այլանդակությունները:

Խրուշչովյան «ձնհալի» բարերար շունչը Սիբիր էլ հասավ: Կազմաքանդվեց ատելի ԳՈՒԼԱԳ-ը: Հանիրավի բռնադատված միլիոնավոր մարդիկ զանգվածաբար իրենց հայրենի օջախներ էին վերադառնում, սակայն, ի ցավ սրտի, իրականում նրանցից յուրաքանչյուրն ընդամենը տուն էր տանում իր խաթարված կյանքի... մնացորդն ու առողջության փշրանքները...

Բարենորոգումներն ամենուր էին՝ երկրի կյանքի բոլոր ոլորտներում: ...Բժիշկ Հարությունյանին հիվանդանոցի գլխավոր բժշկի բուժգծով տեղակալի պաշտոնում տակավին կես տարի էլ չաշխատած՝ զորացրեցին եւ դեպի ազատ կյանք ճանապարհեցին: Մինչ այդ նա, Գեղամին զննելով եւ նեյրոհոգեկան բնույթի ախտանիշներ նկատելով, նրան տեղափոխել էր նյարդաբանական բաժանմունք: Բժիշկը համոզված էր, որ Գեղամի նյարդային հիվանդությունները՝ մասնավորաբար դյուրագրգռությունը, երբեմնակի ի հայտ եկող հոգեկան անհավասարակշռությունը, ձեռքբերովի են, եւ դրանք սկզբնավորվել են դեռեւս գյուղում՝ Թաթոյի Համոյի հետ ունեցած ընդհարման հոգեցունց օրերում, իսկ սիբիրյան կալանավայրերում՝ քրեական հանցագործների միջավայրում, ավելի քան երկու տասնամյակի դաժան ռեժիմն ու տեւական բռնաճնշումները դրանք ավելի են խորացրել, ավերել բնածին, անդորրավետ ներաշխարհը...

Շուտով փակվեց նաեւ հիվանդանոցը... կալանավոր նոր հիվանդներ չլինելու պարզ պատճառով: Գոնե դույզն-ինչ բուժված չէին Գեղամի ախտահարված ջղերը, երբ նրան պատժաժամկետը կրելու համար կրկին ճամբար վերադարձրին:

Երախտագիտական սրտաբուխ արցունքներով նա հրաժեշտ տվեց իր փրկարար եւ անազատության դժնդակ օրերի հոգեկան նեցուկ, մարդասեր ու մեծահոգի հայրենակցին՝ բժիշկ Հարությունյանին: Նրանք այլեւս, էլ երբեք չեն հանդիպի, եւ միայն լուսավոր հուշը կմնա սրտի խորքերում...

Զորացրվելուց հետո բժիշկ Սերյոժա Հարությունյանը նշանակվեց Սոչիի քաղաքամերձ հիվանդանոցներից մեկի գլխավոր բժիշկ, ուր պատվով աշխատեց... ցկյանս...

Գեղամը հաճելիորեն զարմացավ՝ տեսնելով ճամբարի սակավամարդ դարձած բարաքները, ուր մոտալուտ ազատության սպասումով հուսավառվել էին մնացյալ կալանավորների դառնացած սրտերը, եւ նրանք ակներեւաբար այլեւս չունեին նախկին կռվազան վարքը, իսկ հսկիչները մինչեւիսկ հանդուրժող էին ու բարյացակամ...

Համաներման շնորհիվ Գեղամի համար վաղաժամ՝ մեկ տարի շուտ եկավ ազատության բաղձալի օրը: «Ազատությո՛ւն... մի՞թե երազ չէ»,– բերկրում էր նրա սիրտն ու կրծքավանդակում խուտուտ գալիս...

Ահա եւ տունդարձը... Էլի ապրանքատար, անհարմարավետ վագոններ, կայարաններում տեւական կանգառներ, սակայն, քավ լիցի, ուրախ փոթորկվում էր դառնացած հոգին՝ չէ՞ որ տուն է գնում, տո՛ւն, տո՛ւն...

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.03.2023 թ.
Տպաքանակը՝ 1225